ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ԱՆԱԼԻՏԻԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ԱՆԱԼԻՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/01» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստ

Ք.Երևան 07 հուլիսի 2026թ.
ժամը՝ 14:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝
Շմավոն Պողոսյան

Անդամներ՝
Մարիամ Փարվանյան
Արաքսյա Ղազարյան
Արթուր Սահակյան
Ինեսսա Մարտիրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Քրիստինե Հակոբջանյան

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Ք. Հակոբջանյան)

Տեղեկություններ՝

1. «ԱՆԱԼԻՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/01» ծածկագրով ընթացակարգին շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին
2. Հայտեր ներկայացված մասնակիցների անվանումների (անունների), ՀՎՀՀ, հասցեների և էլեկտրոնային փոստի հասցեների մասին
3. «ԱՆԱԼԻՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/01» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին
4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

1. «ԱՆԱԼԻՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/01» ծածկագրով ընթացակարգին շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

(Ք. Հակոբջանյան)

1.1 «ԱՆԱԼԻՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/01» ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով ներկայացվել են www.eauction.armeps.am կայքի միջոցով: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ հունիսի 22, 2026թ, իսկ հակադարձ աճուրդը՝ հունիսի 23,2026թ.:

2. Հայտեր ներկայացված մասնակիցների անվանումների (անունների), ՀՎՀՀ, հասցեների և էլեկտրոնային փոստի հասցեների մասին

(Ք. Հակոբջանյան)

2.1 Հայտ է ներկայացվել հետևյալ մասնակցի կողմից.

Հ/Հ	Մասնակիցների Անվանումներ	ՀՎՀՀ	Հասցե	Էլ. Հասցե
1	«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ	01336677	ք. Երևան, Բաշինջաղյան 2-րդ	extra.mot2024@gmail.com

			նրբ. 10շ. բն.58	

3. «ԱՆԱԼԻՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/01» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ք. Հակոբջանյան)

3.1 Մասնակցի կողմից էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերն առկա են, սակայն համակարգում չեն ներկայացվել ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, արտադրողի և տեխնիկական բնութագրի ռուսերեն տարբերակները: Բացի այդ, «Ապրանքային նշան» դաշտում ապրանքային նշանի փոխարեն ներկայացված են չափման միավորներ և քիմիական բանաձևեր, ինչը չի համապատասխանում սահմանված պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» 41-րդ կետով՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ին ծանուցումն ստանալու օրվանից մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ք. Հակոբջանյան)

4.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակցների կողմից պահանջվող փաստաթղթերը ստանալու հաջորդ օրվա ժամը՝ 11:00-ին, ք. Երևան, Ալիխանյան եղբայրներ 2 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Շ. Պողոսյան

Անդամներ՝ _____ Մ. Փարվանյան

_____ Ա. Ղազարյան

_____ Ա. Սահակյան

_____ Ի. Մարտիրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ք. Հակոբջանյան